ՄԱՅՐ ԱԹՈՌ

—Գերապատիւ Տ. Եղիշէ եպիսկոպոս Դուրեան հեռագրով յայտնում է Ամենապատիւ Տ. Տեղակալին Կ. Պոլսի պատրիարք Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի հրաժարականի և իւր պատրիարքական փոխանորդ ընտրուելու մասին։ Տ. Եղիշէ եպիսկոպոս Դուրեանը յայտնի է իւր մի քանի հայագիտական լուրջ յօդուածներով և ուսուցչական գործունէութեամբ Արմաշի դպրեվանքում։ Նա եպիսկոպոս է ձեռնադրուել 1899 թ. հանգուցեալ կաթուղիկոսի ձեռքով.

—Ամենապատիւ Տ. Տեղակալը շրջաբերական կարգադրութեամբ պատուիրեց Ռուսաստանի բոլոր թեմակալներին գանձանակ շրջեցնել երկու կիւրակէ թեմերի բոլոր եկեղեցիներում ի նպաստ Աղէքսանդրապոլու հեղեղից ջնջուած հայ ազգաբնակութեան և հանգանակած գումարներն ուղարկել Աղէքսանդրապոլու քաղաքագլխին մանաւորելու կարօտեալներին, տեղեկութիւն հաղորդելով նաև Տ. Տեղակալին ուղարկուած գումարների մասին։

—Ամենապատիւ Տ. Տեղակալի միջնորդութեամբ և Տ. Փոխարքայի թոյլտուութեամբ Ռուսաստանից Մայր Աթոռ դարձաւ մեր միաբանակից Տ. Իսահակ վարդապետ Տ. Միքայէլեան, որ տարի ու կէս առաջ տարագրուեցաւ Հայրենիքից Տ. Մխիթար և Մելիք-Թանգեան վարդապետների հետ։

—Յուլիսի 18–21-ին Մայր Աթոռ էր եկել Պետերբուրգի համալսարանի ուսուցչապետ Վ. Վ. Բարթոլդ, որ մեր բոլոր հաստատութիւններն ու հնութիւնները տեսնելուց յետոյ, աչքի անցուց նաև պարսկերէն ձեռագիրներն ու Շահերի և Սուլթանների տուած հրովարտակները։ Յարգելի պրոֆեսորը մահմեդականութեան պատմութեան,

յատկապէս տրաբերէնի, մասնագէտ է և երկար տարիներ զբաղուել է պեղումներով Թուրքեստանում և Միջին Ասիայում։

—Ընթերցող քահանաների ուշադրութիւնն ենք հրաւիրում Հ. Մաքատ քահանայի գիւղական քահանայութեան նուիրած յօդուածների շարքի վերայ և խնդրում իրենց գիտողութիւններն ևս մեզ հաղորդել, ուրպէս դի քահանայութեան վիճակի բարեփոխութեան մասին ևս մեր ասելիքը գրելիս, իրողութիւններն ի նկատի ունենանք։

—Գերմանացի ուսուցչապետ Ֆրիդրիխ Միխայէլ Շիլէ, յայտնի գիտնական Հերման Գունկելի և Օտտոյ Շելի գործակցութեամբ սկսել է հրատարակել «Die Religion in Geschichte u. Gegenwart» վերնագրով մի նոր հանրագիտական բառարան, 4–5 հատորից բաղկացած։ Մեզ ուղարկած բաժանորդագրութեան հրաւիրագրից երևում է, որ աշխատակցութեան է կոչուած նաև մեր միաբանակից Տ. Երուանդ վարդապետ, Հայոց և Պարսից եկեղեցիներին վերաբերեալ յօդուածների համար։

—Մուրացանը՝ Գէորգ Մարզպետունու հեղինակը՝ հիւանդ է, աղքատ և անօգնական Միքայէլեան հիւանդանոցում։ Եթէ նոյն իսկ վերջնականապէս բժշկելու յոյս չլինի, անհրաժեշտ է օգնութեան հասնել և ամոքել այն անձնաւորութեան տառապանքը, որ տասնեակ տարիներ իւր կեանքը այնքան արդիւնաւոր կերպով նուիրել է հայ մատաղ գրականութեան։ Դրամ կարելի է հասցնել Թիֆլիս, Միքայէլեան հիւանդանոց, բժշկապետ Օրբելուն, որի անմիջական խնամքի տակ է գտնուում հիւանդը։

—Ստացուած է «Նոր–Դար»–ի № 1, ամբողջապէս նուիրուած ազգային եկեղեցական խնդիրների, և «Հրազդան» № 1, որ սեպտեմբերից կանոնաւորապէս պիտի հրատարակուի Երևանում Պ. Կանդուրալեանի խմբագրութեամբ։